

ՄԱՐՏԻ

Տարեկան գին 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Գառուրեանի և

Արատյանների խանութում

Օտարաբաղադրացիք գինում են ուղղակի

Тифлис. Редакция „Миръ“

Խմբագրատանը բաց է առաօտեան 10—2

(Բացի կիրակի և տոն օրերից):

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄԱՐՏԻ

ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակվի այս 1877 թվից շաբաթը երկու անգամ: Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Օգնեցէք Վանքիներին: Ներքին տնտեսութիւն: Թիֆլիսի Գումար: Նամակ երևանից Նամակ Մոզդուլից: Նամակ Մոսկովայից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: Արտաքին տնտեսութիւն: Գնապանակորհուրդը: Թիֆլիսի Սերբիա: Ամերիկա: Արտաքին լուրեր: Սառն ու բեր: Ցայտարարութիւններ:

ՕԳՆԵՑԷՔ ՎԱՆԵՑԻՆԵՐԻՆ

«Մշակ» № 13-ի մէջ ընթերցողը կարդացած կը լինի Վանքի գրած այն սրտաշարժ նամակը, որ նկարագրում էր հրեհից յետոյ այդ թշուառ քաղաքի հայ բնակիչների ողորմելի դրութեան սոսկալի պատկերը: Չէ կարելի կարդալ այդ նամակը առանց զգվանքի, վրդովմունքի և արտասուքների...

Ընթերցողը ուշադրութիւն ենք դարձնում ներկայ համարի մէջ տպւած մի նամակի վրա, որով նամակի գրողը ուղարկում է յօգուտ վանեցիների մի յայտնի գումար: Հոյս ունենք որ մեր ուսմիաբնակ հայերը կը շտապեն հետեւել այդ օրինակին և օգնել իրանց կամուրդ նուիրատուութիւններով իրանց տառապեալ վանեցի հայ եղբայրներին: Դժբաղդութիւնը մեծ է, օգնութեան ջանքերն էլ պէտք է մեծ լինեն:

Երեք տարի սրանից առաջ երբ սով էր տիրում Փոքր-Միսայում, Կ. Պօլսի մէջ կազմվեցաւ մի հայոց մասնաժողով, որ հաւաքում էր նուիրատուութիւններ յօգուտ սովատանջների:

Ելած ցանկալի է որ Կ. Պօլսում կազմվի նորից այդ տեսակ պաշտօնական յանձնաժողով յօգուտ Վան քաղաքի հրեհից վնասվածների:

Մենք մեր կողմից հրաւիրում ենք ցանկացողներին միանալ մեզ հետ, կազմել և այստեղ Թիֆլիսում, նոյն նպատակով մի ժամանակաւոր յանձնաժողով, որպէս

զի «Մշակ» խմբագրութիւնը ստիպված է լինել մենակ յանձն առնել նուիրատուութիւններ հաւաքելը և նրանց իրանց տեղ հասցնելը:

Ի հարկէ եթէ չը կազմվի էլ, մենք այնու ամենայնիւ մեր գործը կը շարունակենք, բայց մեզ ցանկալի էր ունենալ մի յանձնաժողով և մենակ չը յանձն առնել այդ ծանր գործի պատասխանատուութիւնը:

Հայեր, օգնեցէք վանեցիներին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՒՄԱՐ

Փետրվարի 28-ին կայացաւ Թիֆլիսի Գումարի ձայնաւորների նիստը: Մինչև անգամ աւելի շատ ձայնաւորներ եկան, քան թէ յոյս ունեցէք: Նստին ներկայ էին 40 ձայնաւորներ: Այդ նիստի մէջ ձայնաւոր պ. Խաթիսով մի առաջարկութիւն արաւ, որով պահանջում էր վերադառնալ Գումարից արդէն հաստատված Թիֆլիսի Միջադէպի արուեստագործական ուսումնարանի կանոնադրութիւնը, մեղադրելով Գումարին թէ կանոնադրութիւնը անհիմն կերպով էր մշակված, թէ հաստատման ձեւը և քուէարկութիւնը ապօրինի էին և այլն, բայց մի և նոյն ժամանակ այդ տեսակ ծանր մեղադրանքներ անելուց յետոյ հաստատեց իր սասանքներ այնպիսի անշան, թոյլ և միմեանց հակասական փաստերով և դատողութիւններով, որ մեզ մնում է միայն ցանկ որ մի քանի անձինքների համար քաղաքային վարչութեան դահլիճը և ինքնավարութեան հիմնարկութիւնը ծառայում են որպէս մի ասպարէզ, որտեղ այդ տեսակ անձինք երևան են հանում իրանց անձնական կրքերը, կամ իրանց վրէժխնդրութեան զգացմունքի ծառա են յաճեցնում...

Այդ տեսակ անմիթթար երևոյթներ հաստատում են մեզ այն համոզմունքի մէջ, որ շատ բաներում մենք դեռ ընդունակ չենք ընդհանուրի շահերը մասնաւոր շահերից և հաճախեց բարձր դասել ընդունակ չենք ճշմարիտ ըմբռնել ազատ հասարակական ինքնավարութեան բարձր նշանակութիւնը:

Բաղաւորապէս նախագահի անկողնապահութիւնը և ձայնաւորների բաղմունքեան խորհրդատու հայեացքը գործի վրա և նրանց բռնած ստան ու խնայելի զիջելով, վերջ տուին այդ մի քանի ձայնաւորներին անանձ կրքերի արտայայտութեանը: Գումարի բաղմունքի նստելով և վերկենայով քուէարկեց պ. Խաթիսովը և Ելմիբրգովը առաջարկութիւնները և վճռեց ոչնչել ընթացքը չը տալ այդ առաջարկութիւններին:

Առհաստատակ խորհուրդը կը տայինք մեր քաղաքի բարեկարգչներին աւելի զբաղվել քաղաքի և նրա ազդեցականութեան կենսական ամենաանհրաժեշտ հարցերով, օրինակ փողոցների անբաւականացուցիչ լուսարարու-

թեան, քաղաքի մէջ տիրող խեղդող թոզը, ջրի պակասութեան, քարայտաւանդների անպիտանութեան հարցերով, որոնք միջոցներ այդ մեր առօրեայ, կենսական ամենաանհրաժեշտ ցանկերին դարձան անել քան թէ պարագիւր դարձականութիւններով, գեղեցիկ Ֆրանկեր անել և թոյլ տալ մի քանի անձանց ինքնավարութեան հիմնարկութեանց իրանց անձնական նպատակների և կրքերի համար ասպարէզ շինել... Փետրվարի 28-ի նստի մէջ, Գումարի բաղմունքիւնը և նախագահը ապացուցին իրանց անկողնապահութեամբ և արհամարհական յարաբերութեամբ դէպի մի քանիների կրքերի արտայայտութիւնները, որ արժանի են քաղաքային ինքնավարութիւնը վայելելու:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

22 փետր. 1877

Արարատեան բոլորակ դաշտի հորիզոնում գետեղուած է Հայաստանի ամենանին քաղաքներից մինն—Երևան, 5000 տուն բնակիչներով, որի 3000 տուն պարսիկ բնակիչք են, իսկ 2000 տուն հայ բնակիչք: Հայ անունն այստեղ առաջով դարձեցնում է այն ամեն մի անհատի յիշողութիւնը դէպի հայկական ազդեցական կենաց պարկեշտ բարեմասնութիւնը: Հայի նուրբ յատկութիւնները այժմ ևս յայտնվում են այստեղ հայ բնտանեացի մէջ, բրիտանիկայից աւստրիականութեամբ: Հայը միշտ ջերմ փափազն ունի դէպի ուսումը, բայց տարաբաղադար ունանց նիւթական միջոցների և ունանց ընտանեկան հանգամանքների չը ներկու պատճառով, զուրկ են մնում դաստիարակելու իրենց զաւակաց թէ միջնակարգ և թէ բարձրագոյն ուսումնարաններում: Բացի մի քանի վերին դասի ընտանիքներից, որոց որդիքն սովորում են Ս. Պետերբուրգի, Օդեսայի համալսարաններում և Մոսկովայի Լազարեանց ձեռնարանում, հասարակ դասի ժողովուրդը բաւականաւոր է միայն հոգեւոր և թեմական դպրոցով, որ գտնվում է տեղուս առաջնորդարանի բակում: Այդ դպրոցը քիչ չէ ծառայել հասարակութեանը իւր արդիւնաւոր աշակերտներով, սրանից մի քանի տարիներ յառաջ, որ վկայում են այժմ պետական ծառայութեան պաշտօն վարող այս ուսումնարանում աւարտած աշակերտները: Բայց այժմ դպրոցը ներկայացնում է մի թշուառ պատկեր և տուրք տեսարան: Այդ դպրոցը, որ երբեմն զուգահեռաւոր բարեկարգութեամբ և յառաջադիմութեամբ էր զարգանում օր աւուր վերա, հետեւաբար մինչ ներկայ վիճակաւորի օրերը, այժմ կարծես մահացուցիչ զարկը նրան անշուշտեց... Այստեղի սրբազան առաջնորդը անհինգ տարի է որ մուտ է գործել մեր քաղաքը առաջնորդական բարձր պաշտօնը վարելու: Նոյն օրից սկսած հայ ժողովուրդը չէ նշմարել նորանում առաջնորդական յատկութիւնները, այլ միշտ նկատել է նորանում դանդաղ պաշտօնավարութեան խոշոր կետերը: Առաջնորդի պարագն է միշտ այցելելու եկեղեցիները և դպրոցները թէ քաղաքի և թէ վիճակի, և միշտ հսկել նոյն բարեկարգութեան և բարեկաւութեան վերա, բայց դժբաղադար զուրկ մնաց հասարակութիւնն տեսնելու այդ առանձնապատկերները նորանում: Արական դպրոցի տղայոց կարգաւոր ձայնն միշտ լսում է իւր դահլիճում բազմաթիւ վերա բաղմունք, սորձ անուշանելու ժամանակ, էլ քնչին պէտք է ներկայութեան քաշել և մտնել զպրանոցը, ուր մնաց ծխական դպրոցները, որտեղ ոտքով պէտք է դնալ կամ ֆայտօնով... Բնչին է պէտք այցելելութիւնները, քնչին է պէտք հսկել վարձպետաց և վարձուհեաց ընթացքի և բարոյական սկզբանց վերա... Բայց չէ վիճակաւորին, որ Գայանեան օրերըական դպրոցի վարձուհին իւր ուսուցչութեան պաշտօնից աքսորվեցաւ...

Վերջապէս քաղաքի հասարակութիւնը ճանաչեց նորա անդորոնէութիւնը և անհոգութիւնը և որչեզ իւր միջոց պատուաւոր անձինքներ, և ուղարկեց Վեհափառ Կաթողիկոսի մօտ խնդրելու, որ սրան հրաժարեցնէր և մի ուրիշ անձն նշանակէր: Թէև Վեհափառ յարգել էր ժողովրդից խնդրելը, բայց յայտօր մնաց անկատար միայն որ Հոգեւոր իշխանութեանը ևս քաջ յայտնի լինելով սրբազանի պակասութիւնները, բաւական համարեց քաղաքավարի կերպով պատօնից հանել, և խոհեմութեամբ կարճեցրեց նորա տարեկան 1200 ռուբլ առձեկադրամից, նշանակելով միայն վեց հարիւր ռուբլ, այնպէս որ սրբազանն ինքն իմանար իւր պակասութիւնները և կամովին իւր հրաժարականում տար: Բայց ինչ կը ներգործէր այդպիսի քաղաքավարի հարուածը մի անտարբեր անձի վերա... Լաւ կը լինէր եթէ հոգեւոր բարձրագոյն իշխանութիւնը իւր ուշադրութիւնը դարձնէր դէպի մեր քաղաքի ներկայ անախանձելի դպրոցաց վիճակը, հրաժարեցնէր բոլորովին սրան պաշտօնից, նշանակելով մի այլ գործունեայ, բանիմաց և ժողովրդական հոգեւոր անձն, և չը զօնէր այսպիսիների կամայականութեանը եկեղեցեաց և դպրոցաց բարեկարգութիւնը և յառաջադիմութիւնը:

Երևանցի

ՆԱՄԱԿ ՄՕԶԳՕՐԻՑ

Փետրվարի 18-ին

«Մշակ» № 4-ում գետեղուած էր մի յօդուած «Մեր ուսումնարանները» վերնագրով: Յօդուածագիրը իրան առիթ է առել «Терскія Вѣдомости» ուսուցիչի առաջին համարում գետեղած յօդուածը, որը խօսում է Մոզդուլի ուսումնարանների վերա առհասարակ, իսկ հայոց ուսումնարանների վերա առհասարակ: Իսկ հայոց ուսումնարանների մասին լաւ անհարկութիւն է անում, ասելով՝ որ թէ նորաւոր աւելի լաւ դրութեան մէջ են գտնվում, բայց նորանց սպաւնում է, զուցէ մօտիկ ապագայում, կատարեալ փակումն, որովհետեւ ուսման ծառաւը ունեցող նօղայները և չէքքէզները (?) չեն բնդոււնվում այդ ուսումնարաններում, և այդ պատճառով միտք ծնուեցաւ հիմնել մի պրօգրիմաւոր (երկի այդ նօղայների և չէքքէզների համար), որին կը զօնվի թէ հայոց հոգեւոր դպրոցի և թէ քաղաքային ուսումնարանի գոյութիւնը...

Այս կտորն առաջ բերելով, «Մշակ» յօդուածագիրը հանում է այն ցաւալի եղբակցութեանը, որ մեր ազգային ուսումնարանները Անդրկովկասում միայն գոյութիւն կարող են ունենալ, ուր հայոց ազգաբնակչութիւնը խիտ է և ուր նոքա պահպանել են իրանց ազգային ինքնուրոյն յատկութիւնները, իսկ Կովկասում նորանք վաղ թէ ուշ պիտի փակուին, մասնաւոր որ անխտիր չեն ընդունում ամենայն ազգութիւնների զաւակներին:

Արդեօք այս տեսութիւնը ճշմարիտ է կովկասի այն հայաբնակ քաղաքների վերաբերութեամբ, որոնցում կան ազգային ուսումնարաններ: Արդեօք Կովկասում հայերը իսկապէս կորցրել են իրանց ինքնուրոյն ազգային յատկութիւնները: Արդեօք նոքա այնքան սակաւաթիւ են, որ չեն կարող ապահովել իրանց ուսումնարանների գոյութիւնը աշակերտներ մատակարարելու կողմից: Մենք հրաժարվում ենք այս հարցերի բացատրութեամբ զբաղուելուց, թէ և չենք կարող չը յայտնել, որ բոլորովին հաւատարմ ենք գտնում: Եթէ չը լինէր մասնաւոր առանձնութիւնները, հայը Կովկասում նոյնն է, ինչ որ Անդրկովկասում: Թէ բնտանիքի թէ բնկերական և թէ անհատական կենքերի մէջ նա ներկայացնում է մի և նոյն պակասութիւնները և արժանաւորութիւնները, մի և նոյն ձեւում ենք և նախապաշարմունքները և մեր ուսումնարանները Կովկասում, ինչպէս որ Անդրկովկասում: Ինչպէս լցուցանելու մեծ պաշտօն ու պարտականութիւնները: Այս մասնաւոր նկատմութիւնից յետոյ անցնենք ցոյց տալու, որ այդ տե-

Վերականգնողական թատերերը վերջացա-
նը դժանուր դեպքերում ծախսերը ցուցնում են
ներկայացումը բաժանման երկար քաղաքացի-
ականությանը յաջողություններ են ստացել ամե-
նամեծ պատրաստություններով տեսարանին
վրա հանում էր Լեւոն Տերյանի աշխատու-
թյունը, և կրթության մեջ լինելու նշանակու-
թյունը թատերաբեմին վրա պետի ենթելու
Մանուկյան մին, որը անունը համարվել
լինելով մինչև Կ. Պոլսի հասարակական-
աշխատանքային հրահանգում էր իւր դերն ամենայն
ճարտարություններ կատարելու, և ստոր հա-
մար եւրոպայի մայրաքաղաքներն ուղևորելով
հաշտվող որ հրահանգում հետ տեսնու էր
էր Կ. Պոլսի անհամարելությունները անոր դա-
րձակները կը սպասել, որպէս զի օր մ'առաջ,
բաղձացնել տեսարանին հանդիսատես լինե-
լու պատիւն ունենայ: Վերջապէս մեծանուն
դերասանը մայրաքաղաքը հասաւ: Հանդիսա-
տեսային անհամարելությունները վարձու-
բեմին կը սպասէր. տեսարանն ամբողջով
լինելու համար ամեն ջանք ի գործ դրուած
էր. զարդերը խիստ շքեղ էին: Բայց դերա-
սանը ունեւորներն առ ոչինչ գրելով վարձ-
ուբեմին ետին կեցած ռազմական իրենց դերը
կը սերտէին, այնչափ զաղանի, որ հազիւ
հազ փափուք մը կը լուծէր. միանգամայն
դերասանը և դերասանուհիք, քանզի առանց
դերասանուհեաց ներկայացում չէր կրնար
լինել, վարձուբեմին ներքո կը դրսնուէին, կու-
տէին, կրմալէին: Ունեւորները, երկար ժամա-
նակ սպասելէ ետեւ անհամարելություններ նշան-
ներ ցուցնել սկսան: Թատերաբեմին իրենց
դրոյ ներքեւ կը հեծէր, և փոքր մի ևս բազ-
մությունները դուրսէ վարձուբեմին ներս խուժէր:
Ներսաններն այս տեսնելով ուշաթափ եղան,
բազի ոչ ևս կարելի էր վարձուբեմին բա-
ցումն յայտարար: Աստի հարկ եղաւ ներկայա-
ցումն սկսիլ: Առաջին արարուածն երկար
և տաղտկալ ճառատանք մ'եղաւ, զոր դերա-
սանայ մին արտասանեց: Այս հատուածը
բաղձալին մասերու բաժնուած էր, որոց
մէջ Կարապետ և Սերվիա նշանաւոր տեղ մը
կը բռնէին. առաջինը հորդային վարձարու-
թյուններ կառուէր, երկրորդն ալ պարտու-
թեամբ կընդունէր ինչ որ պատերազմաւ չէր
կրցած ձեռք բերել: Սլովենացի գաւառք, Հէր-
սէք, Պոնտ, Պուլլարիա, պարտաւթութեան
վարձը կընդունէին ինքնօրինականութեամբ կամ
ինքնօրինականութեամբ, օտար սովորներու
և քանիչ յանձնարարներու պաշտպանու-
թեան ներքեւ: Ամեն կողմ օտար յանձնա-

բուն նամակագրողը այնքան աղնուկներն չունի, որ ստորագրէ նամակը իր ազգանունով: Մենք այդ նամակը կարդալուց յետոյ, իսկոյն գործածեցինք նրան մեր գրասեղանի վրա թափված թանաքը սրբելու համար և յետոյ սեղանի տակ դրած զամբիլի մէջ գցեցինք: Եթէ պատուելի նամակագիրը բարեհաճի յայտնել մեզ իր հասցէն Մոսկվայում, մենք ուրախութեամբ կը վերադարձնենք նրան 8 կոպէկ փոստի մարկա, եթէ նա զո՛ւ չէ այն գործածութեանց, որ մենք արեցինք նրա երեւելի նամակից:

Շնորհակալութեամբ ստացանք Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մի հայերէն զրբ հետեւեալ վերնադրով «Անանիայի Շիրակունայ միացորդը բանից» ի լոյս ած. Պ. Ս. Պետերբուրգ, ի սպարանի կայսերական ձեռնարանին Գիտութեանց:— 1877:

Փետրվարի 28-ին Թիֆլիսի քաղաքային Կուլայի նիստը կայացաւ: Ներկայ էին 40 ձայնաւորներ: Նիստը վերջացաւ մօտ 11 1/2 ժամին:



Հաղարներ անձինքներէց երկուսն իրանց գեղեցիկ մազերով պարտական են միայն արաստամանում փաճառելոյ այնպէս անուանված ԲՈՒՍԱԿԱՆ ԽԻՆՈՒԼԻՑՆԵՐՆԻ ՊՕՄՍԳԱՅԻՆ, որ մազերը բուսնելէ տալիս Սյոյ պոմադը բժշկական շատ հեղինակութիւնն ունի փորձված է և ունի վկայական թղթեր պ. Կլեյնակոյց ար Վիենայի Լանդզերիխի քիմիայի պրոֆէսոր է և նոյնպէս Մոսկվայի բժշկական վարչութեան թղթաւորութիւն: Նա ունի մեծ ազդուութիւն և վերջին ժամանակ հետազոտած էր Մոսկվայի բժշկական վարչութեանց արտաքին նրան իր հաւանութիւնը: Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անգամ մազերից մերկ դուրսնոր ծածկվում իր մազերով: Սյոյ պոմադը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին տաճիկ է բնական տեսք և փայլունութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկութիւններէն մինն է, կարող է զարգարել ամենաչքեղ տաւաղէտի սեղանը: Սյոյ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունքն են տալիս ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա բնագործակ տարածման և պատուելի հասարակութիւնից լաւ ընդունելութիւնով:



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍԱԼԻՑԻԿԱՆ

միջոց ատամների համար

Լ. Է. ԱԴԻԼՀԱՅՍ

ատամնաբոյժի

Փորձված լինելով բժշկական պրակտիկայով, սակեցիկան պրեպարատները, բժշկական առաջին հեղինակութիւնների հետազոտութիւնների շնորհով ստացան մեծ անուն, որպէս առողջապահական ամենալաւ միջոցներ բերանի և ատամների համար, առաջարկվում են հեղուկի (բերան ողողելու համար) և ատամների փոշիի ձևով, նրանով են յայտնի, որ պահպանում են ատամները փշանալուց և ոսկորի փտելուց, առաջ են առնում ատամների վրա քարի կազմվելուն, յո՛ւ են տալիս ծնոտին և բերանին հաճելի թարմութիւն են տալիս:

Գինը ատամների սակեցիկան

Էլեկտրի	1 ր. 25 4.
Փոշի	1 25 4.
Կապույտ	1 25 4.
Մասնակի (ատամները պլումբելու համար)	1 25 4.
Ատամների կաթիլներ	50 4.

Սյոյ արդիւնքը օգտով և մաս մաս ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ Յ. Ս. ՄՈՒՐԻՆՈՎԻ և ընկ. մօտ:

Въ Тифлисъ у Цуринова

5 (12)

ԳԻՆԸ ՄԻ ՇԻՇԻ ՀԱՄԱՐ 2 ԲՈՒԲՈՒ

Իւրաքանչիւր չիշի հետ տրվում է և պոմադի գործածութեան նկարագրութիւնը:

ՊՕՄԱԿ

PASTA EUGENIE

Սյոյ պոմադի հնարող արհիւնը որ յայտնվեցաւ «Pasta» անունով, պատիւ ունի յայտնել արդոյ հասարակութեան որ «Pasta Eugénie» պոմադը փած է և ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ Ս. Ս. ՄՈՒՐԻՆՈՎԻ մօտ, իսկ Ստաւրապոլի մազաղբիւնում, Արքայապետական, Վ. Լազարի կապիտալ պ. ՍԵՏԱԼԻ մօտ, իսկ Ստաւրապոլի մազաղբիւնում, Արքայապետական, Վ. Լազարի կապիտալ պ. ՍԵՏԱԼԻ մօտ, որտեղ ծախվում են և միացած այստեղ յիշված արդիւնքները: Սյոյ պոմադը շատաւոր է նորանով, որ նրա գործածութեան կարծ ժամանակից յետոյ երեսը իր տակիւմ է գանապան բիծերից:



անմաքրութիւններից և խորիւրդ և ստանում է երկատարակական հասակին յատուկ թայմութիւնը և զերեցկութիւնը: Առաջարկվում է այն անձանց որք կամենում են իրաւակ սպիտակ երեսը զոյնը ստանալ, Հնարողը երաշխաւոր է պոմադի ներգործութեան հաւատարմութեան համար: Գրաւական կարող են լինել առնողները համար և այն վկայաթղթիկի որք ստացված են թէ վիենայի քիմիկոս պրոֆէսոր պ. Կլեյնակոյց, թէ Մոսկվայի բժշկական վարչութեան թղթաւորութիւնը:

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Բ. 60 Կ.

Որի հետ տրվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը:

Իւրաքանչիւր սրտակի վրա ինչպէս մազերի համար, այնպէս «Pasta» գանվում է մի առանձին զրոյժ «Ամուրի» պատկերով և հնարողի ստորագրութեամբ: *Bertha Ries*



գրում ենք ուղարկութիւնը զարմնելու: Յ. Գ. «Pasta» պոմադը առաջարկվում է և նոյա, որք թէ և չունեն գանապան վերս յիշված կաշու հիւսնողութիւններ, բայց կամենում են ունենալ իրաւակ և թարմ երեսի վրի և ձեռքերի զոյնը:

ՉԵՈՒԳԵՐԻ

Սյոյ պոմադը այնպէս է պատրաստված, որ նրա գործածութեանց հետոյ ձեռքերը ստանում են զարմա-



ՊՕՄԱԿ

նալի փափկութիւն և սպիտակութիւն:

Սրտակի գինը 1 ր. 30 Կոպ.

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մոյգ խորտակ, թէ սե, որ ներկում է 10 րոպէի միջոցով և չէ կորցնում իր տեսողութիւնը 6 շաբաթվայ ընթացքում: Արդիւնքը 3 րոպէի ՏՕԿԱՅԱՆ ԲԱԼԶԱՄ, հաստատ միջոց կոշտերի և կաշու կոշտութիւնների դէմ: Սրտակը 60 Կ. 49 (50)

„ՓՈՐԶ“

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ԵՌԱՄՍԵՍԱՆ ՀԱՆԳԵՍ

«Փորձը հրատարակվում է հետեւեալ ծրագրի համեմատ բովանդակութեամբ: Ա. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ. Այս բաժնի մէջ կը մտնեն թէ ինքնուրոյն և թէ օտար լեզուների թարգմանած բանասիրական աշխատութիւնների կեանքից առնուած նկարագրութիւններ, վէպեր, ոտաններ, դրամատիկական գրութիւններ—թէ արձակ և թէ ոտանաւոր: Բ. ՊԵՏԱԿԱՆ. Յօդուածներ Հայոց, Ռուսաց և ընդհանուր պատմութիւնից: Այս բաժնի մէջ կը մտնէ նաև ժամանակակից քաղաքական կեանքի տեսութիւնը: Գ. ՌԵՍՊՈՒՄԵՆԱԿԱՆ. Դիւրբաններ ռճով գրուած գանապան յօդուածներ գիտութեան ոլլ և այլ ձեւերից առնուած: Դ. ՄԱՆԿԱԿԱՆԱԿԱՆ. Մանկավարժական հարցերի վերաբերեալ ընդհանուր յօդուածներ, դպրոցական գործի այժմեան դրութիւնը թէ Հայոց մէջ և թէ Ռուսաստան ու արաստահման: Ե. ԲՆԵՌՈՒԹԻՒՆ և Մատենախօսութիւն Հայոց, Ռուսաց և օտար լեզուներով լոյս տեսած նշանաւոր գրքերի: Զ. ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այս բաժնի մէջ կը տղադրուին այնպիսի յօդուածներ, որոնք մեր ազգի ներկայ վիճակի քննութեանն են նուիրած, այն է՝ եկեղեցւոյ, ուսումնականաց, ազգային լուսաւորութեան, ազգային տեսաւորութեան և հասարակական կեանքի: Կը լինեն թղթակցութիւնը ամեն հայաբնակ տեղերից, կարգադրութիւնը ճշուրթեան և հոգեւոր վարչութեան: Է. ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեսութիւն ներքին գործոց Ռուսաստանի ընդհանրապէս և Անդրկովկասի տաննապետ: Այս բաժնի մէջ կը բովանդակին նաև թղթակցութիւնը և գանապան հարցադրութիւնը Ռուսաստանի և Կովկասի կեանքի մասին: Ը. ԱՅԼ ՆԻՍԻՒՄԻ: Ամեն տեսակ լուրեր: Թ. Յայտարարութիւններ տեղական և եւրոպական լեզուներով: Փորձի բաժանորդաւորներ ամենայն տեղ տաւր մանէթ է: Ստորագրուել կարելի է Տիֆլիսում՝ «Փորձ» Խմբագրատանը, Հ. Կեֆիաձեանցի ծխախոտի խանութումը և Զաքարիա Գրիգորեանցի գրալաճառանոցում: Օտարալեզուները կարող են դիմել խմբագրին հետեւեալ հասցեով—Тифлисъ. Въ Редацію Армянскаго журнала «ПОРДЗ», իսկ արտասահմանից—Tiflis. Rédaction du journal Arménien «ПОРДЗ»:

МАГАЗИНЪ ЧАСОВЫХЪ ДѢЛЪ МАСТЕРА
С. КАЦА
Дворцовая улица № 3.

Вновь полученъ большой выборъ разныхъ карманныхъ ЧАСОВЪ, ремонтуаровъ различныхъ системъ, отъ лучшихъ Женевскихъ фабрикъ. За вѣрность хода часовъ магазинъ ГАРАНТИРУЕТЪ. Также выборъ золотыхъ и сереб. вещей.

Цѣны умѣренныя. 5—5

ՊՐՈՎԱՆՍԱՅԻ Իսկական ԶԼԹ, ֆունտը 60 կոպէկ.
ԸՆԳՈՒՋԻ ԶԼԹ ֆունտը 40 կոպէկ.
Կարելի է ստանալ Ա. ՅՈՒՐԻՆՈՎԻ և ընկ. մագաղանում, ԹԻՖԼԻՍՈՒՄ. Въ Тифлисъ у Цуринова.

6 (8)—1.